ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Շրջանառության մեջ դրվեց «Պասվո բլուր» նամականիշը

Իրան-Հայաստան երկաթուղու նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են

ՖՈՏՈՆՈՒՄ

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Հայաստան պաշտոնական այցի շրջանակներում ռուսական պատվիրակության կազմում ժամանած ՌԴ տրանսպորտի նախարար **Իգոր Լեւիտինը** «Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 0010 բաժանմունքում երեկ մասնակցեց «Պասվո բլուր» փոստային նամականիշի մարման պաշտոնական արարողությանը: 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմներում զոհված ռուս սպաների հիշատակին նվիրված նամականիշի թողարկմանը հայկական կողմից ներկա էին ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը եւ «Հայփոստ» ընկերության տնօրեն Արման Խաչատուրյանը:

Նամականիշի անվանագինն է 350 դրամ, տպաքանակը՝ 40 հազար, գեղաթերթիկի անվանագինն է 650 դրամ, տպաքանակը՝ 30 հազար:

Շարունակությունը՝ էջ 4

Շրջանառության մեջ դրվեց «Պասվո բլուր» նամականիշը

Իրան-Հայաստան երկաթուղու նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են

Սկիզբը՝ էջ 1

Այսպիսով, Հայաստանի փոստային գլխավոր օտերատոր «Հայփոստը» շրջանառության մեջ է դնում Գյումրիում գտնվող ռուսական սպայական գեղեցմանոցի՝ «Պասվո բլրի» վերականգնմանը նվիրված փոստային նամականիշ եւ գեղաթերթիկ: Նույն օրը ՌԴ եւ ՀՀ նախագահներ Դմիտրի Մեդվեդեւի եւ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Գյումրիում վերաբացվեց վերականգնված հուշահամալիրը:

Նամականիշի վրա պատկերված է Նիկոլայ Լուսավորիչ Սմանչելագործի ժամանումմատուցը եւ Կարսի բերդի գրավմանը մասնակցած ռուս զինվորների հուշարձանը: Գեղաթղթի վրա պատկերված են «Կարսի բերդի գրավումը. Բանալիների փոխանցումը» փորագրության եւ ռուս-թուրքական արշավների ժամանակ ռուսական զորքերի առաջխաղացման քարտեզից հատվածներ:

«Պասվո բլուրը» զինվորների գերեզմանոց է՝ ստեղծված 1856 թ. Ալեքսանդրապոլում, Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար գեներալ Նիկոլայ Մուրավյովի հրամանով: Այստեղ հանգչում են 1855թ. եւ 1878-79 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ զոհված ռուսական բանակի 156 սպաների աճյուններ: Խորհրդային ժամանակներում դամբարանը ավերվել է, տապանաքարերը՝ ոչնչացվել, տեղում կառուցվել

ՖՈՏՈՆՈՒՄ

է մանկական բուժարան:

Գերեզմանոցի կողմին պահպանվել է ռուսական ուղղափառ ժամատուն-մատուռը: Եկեղեցին օծվել է 1886թ. եւ փակվել 1920թ.՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, իսկ 1980-ական թվականներից ի վեր ծառայել որպես ռուս-հայկական հարաբերությունների թանգարան: 1988թ. ավերիչ երկրաշարժի արդյունքում մատուռ-ժամատունը վնասվել է, եւ ցուցադրությունը դադարեցվել: Ներկայումս այն Նիկոլայ Լուսավորիչ Հրաշագործին նվիրված մատուռ-ժամատուն է:

Հուշահամալիրի վերականգնման ընթացքում տեղադրվել է Կարսի բերդի գրավման ժամանակ ընկած ռուս զինվորներին նվիրված 13 մետրանոց օբելիսկի կրկնօրինակը: Հուշարձանը տեղադրվել է 1910 թ. Կարսում, իսկ 1918թ. տարածքը Թուրքիային հանձնելուց հետո այն ոչնչացվել է թուրքերի կողմից:

Իգոր Լեւիտինը խոսեց նաեւ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման աշխատանքների մասին՝ տեղեկացնելով, որ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հանձնարարականով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն արդեն մի քանի նիստ է անցկացրել: Ռուսաստանի գիտության ինստիտուտը ներկայումս ավարտում է երկաթուղու կառուցման նախագծման աշխատանքները, որին կհաջորդի ներդրումների հիմնավորման փաստաթղթի ձեւավորումը՝ Հայաստան-Իրան երկաթուղու, ինչպես նաեւ Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու հատվածի կառուցման վերաբերյալ: Ըստ Ռուսաստանի տրանսպորտի նախարարի, երկաթուղու կառուցման նախնական արժեքը գնահատվում է 1,7-2 մլրդ դոլար: Առավել ստույգ ծրագրի արժեքը կներկայացվի տեխնիկական նախահաշվի կազմումից հետո:

Գայանե ՅՈՎՍԿԻՄՅԱՆ